ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

№ 04/5-2/22181-2024

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆինսախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 055

Եզրակացություն
1899 թվականի հուլիսի 29-ին և 1907 թվականի հոկտեմբերի 18-ին Հաագայում ընդունված ««Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիաներով Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող դրույթների առկայության մասին

1899 թվականի հուլիսի 29-ին և 1907 թվականի հոկտեմբերի 18-ին Հաագայում ընդունված ««Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիաներում նախատեսված են դրույթներ, որոնք ենթադրում են Կոնվենցիաներին միացած կամ որոշակի վեճում ներգրավված պետության կողմից կատարվող ծախսեր, մասնավորապես, 1899 թվականի կոնվենցիայի 29-րդ և 57-րդ հոդվածներով և 1907 թվականի կոնվենցիայի 36-րդ, 50-րդ և 85-րդ հոդվածներով նախատեսվում է հետևյալը.

1. Միջազգային բյուրոյի ծախսերը հոգում են պայմանավորվող կողմերը՝ իրենց համար Համաշխարային փոստային միության միավորային համակարգի համաձայն հաշվարկվող միավորների չափաբաժնով (Հայաստանի Հանրապետության համար հաշվարկվում է մեկ միավոր): Մեկ միավորի տարեկան արժեքը յուրաքանչյուր տարի սահմանվում է Վարչական խորհրդի կողմից, օրինակ՝ 2024 թվականի համար մեկ միավորի արժեքը սահմանված է 1923 եվրո: Կոնվենցիային միացող երկրների համար ծախսերը հաշվարկվում են ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

2. Յուրաքանչյուր վեճի շրջանակներում ձևավորվող քննիչ հանձնաժողովի և տրիբունալի գործունեության ծախսերի մասով՝ կողմ հանդիսացող պետությունները հոգում են ինչպես իրենց ծախսերը, այնպես էլ քննիչ հանձնաժողովի և տրիբունալի՝ կողմերի միջև

հավասարապես բաշխված ծախսերի իրենց մասնաբաժինը. նշված ծախսերի չափը յուրաքանչյուր դեպքում ենթակա է գնահատման կոնկրետ վեճի քննարկման գործընթացի շրջանակներում:

Կոնվենցիաներին միանալու արդյունքում Հայաստանի Հանրապետության համար ակնկալվող ծախսերի մասով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեում և ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի նախագծում միջոցներ նախատեսված չեն:

10/18/2024

X

ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

Signed by: HAKOBYAN EDUARD 3001910811

ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

Կատարող՝ Դ. Սանթրոսյան
Հեռ. 011800351